ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ

ԱՐՄԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ

Ներսիսյան դպրոցի շրջանավարտ Հակոբ Մեղավորյանը[1] 1891 թ. ընդունվում է Լոզանի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և միաժամանակ դասախոսություններ լսում մանկավարժական բաժնում։ Իր սիրելի դասախոս պրոֆ. Օսկար Մարլին-Վիսկոնդի ղեկավարությամբ նա դոկտորական դիսերտացիայի թեմա է ընտրում «Հայկական ընտանիքի և ամուսնության ազգագրական ու իրավաբանական ուսումնասիրությունը» և մեծ ջանասիրությամբ լծվում դրա կատարմանը։

Առաջին անգամ չէր, որ հայ ազգագրության, ընտանիքի և ամուսնության հարցերը ուսումնասիրության նյութ էին դառնում։ Հայագիտության մեջ XIX դարի կեսերին ազգագրությունն արդեն իսկ շոշափելի քայլեր էր կատարել։ Երևան էին եկել Գ. Սրվանձտյանի, Քաջբերունու, Ս. Հայկունու, Սեդրակյանի, Լալայանի և ուրիշների աշխատությունները։ Սակայն, որպես գիտություն, ազգագրությունը դեռևս կայուն գիտական հիմքերի վրա չէր դրվել, պատմության, լեզվաբանության, գրականագիտության համեմատությամբ ցածր աստիճանի վրա էր գտնվում։

Ուսանողական տարիներին Հ. Մեղավորյանը բազմակողմանիորեն ուսումնասիրում է իր դիսերտացիոն թեմային վերաբերող սկզբնաղբյուրները, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզվով եղած գրականությունը։ 1894 թ. նա ավարտում է համալսարանը, հաջողությամբ պաշտպանում դոկտորական դիսերտացիա։ Լոզանի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան պրոֆ. Գրենիեն 1894 թ. հունիսի 4-ին պաշտոնական տեղեկանք է տալիս, որ ֆակուլտետի խորհուրդը Հակոբ Մեղավորյանին «Հայկական ընտանիքի և ամուսնության ազգագրական ու իրավաբանական ուսումնասիրության» համար շնորհել է իրավագիտության դոկտորի գիտական աստիճան։ 1894 թ. Լոզանում ֆրանսերեն լեզվով տպագրվում է նրա դիսերտացիան[2]։

Հակոբ Մեղավորյանի այդ աշխատությունը մեր պատմաազգագրական գրականության մեջ մի նորություն էր։ Գիրքը գրված էր փաստական հարուստ նյութերի հիման վրա, տեսական բարձր մակարդակով։ Հայագիտական գրականության մեջ Հ. Մեղավորյանն առաջինն է, որն օգտագործել է Ֆ. Էնգելսի

---

[1] Հակոբ Մեղավորյանը (1856—1930 թթ.) ծնվել է Տրապիզոնում։ Ննդավայրում սկզբնական կրթություն ստանալուց հետո 1873 թ. նա տեղափոխվել է Թիֆլիս, ընդունվել և ավարտել է Ներսիսյան դպրոցը, որոշ ժամանակ զբաղվել ուսուցչությամբ։

[2] „Etude ethnographique et juridique sur la famille et le mariage arméniens. Précédée d'un aperçu historique", Dissertation présentée a la faculté de droit de Lausanne par Agop Megavorian candidat eu doctorat, Lausanne, Imprimerie ch. Pache, cité 3, 1894.

«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» դասական աշխատությունը, հենվել նրա վրա, փորձել մարքսիստորեն լուսաբանել հայ ազգագրության և իրավագիտության հարցերը։

Հակոբ Մեղավորյանի «Ազգագրական և իրավաբանական ուսումնասիրությունը հայկական ընտանիքի և ամուսնության վերաբերյալ, նախորդված պատմական ակնարկով» աշխատությունը բաղկացած է նախաբանից, երկու գլխից, 10 ենթագլխից և վերջում կցված 20 կետից բաղկացած դիսերտացիայի թեզիսներից, ընդամենը 130 էջ։

Նախաբանում (էջ 7—38) սեղմ կերպով խոսվում է հայոց ազգային իրավունքի, նրա պատմական դերի ու նշանակության մասին։ «Դարեր ի վեր,— գրում է նա,— Հայաստանն իր քաղաքական անկախությունը կորցնելով՝ նրա պոզիտիվ իրավունքը նույնպես խափանվում է, բացի կանոնական իրավունքների մի մասից, որը մինչև այժմ գոյություն ունի և որի մասին կխոսենք հետագայում։ Իրավունքն ընդհանրապես, սովորութական իրավունքը հատկապես, մի տեսակ հայելի է, որ արտացոլում է բարքերն ու ժողովրդական հաստատությունները. այն պետք է խոր ուսումնասիրության առարկա դառնա նրանց համար, ովքեր զբաղվում են ազգի պատմությամբ ու ազգագրությամբ»[3]։

Նշելով, որ արդի գիտնականներն ու իրավաբանները շատ քիչ են զբաղվում այդ հարցերով և որ իրավաբանական գիտությունը շատ աղքատ է, նա բարձր է գնահատում հատկապես միջնադարի խոշոր մտածող Մխիթար Գոշի դերը։ «Նրա Դատաստանագիրքը մի ամբողջ հարստություն է և մենք կարող ենք ասել, որ դա միակն է հայ իրավաբանական գրականության մեջ։ Մխիթար Գոշն այս գրականության հիմնադիրն ու փառքն է... Նրա բոլոր գործերի գլուխգործոցը և պսակը Դատաստանագիրքն է»,[4]—գրում է Հ. Մեղավորյանը։ Սա թարմ խոսք էր, արժանի գնահատական Մխիթար Գոշի և նրա Դատաստանագրքի մասին։

Հայ իրավունքի վերաբերյալ տրված պատմական ակնարկը, որը կառուցված է նշանավոր պատմագիրների աշխատությունների, կանոնագրքերի, դատաստանագրքերի, հռոմեական ասիզների, Հուստինիանոսի և Վախթանգի օրենքների համեմատական քննության ու վերլուծության վրա, գիտական բարձրարժեք մի տեսություն է, ծանրակշիռ խոսք հայկական իրավունքի ու իրավագիտության վերաբերյալ։

Հ. Մեղավորյանի մենագրության առաջին գլուխը վերնագրված է «Հայկական ընտանիքի և ամուսնության էվոլյուցիան» (էջ 39—79)։ Գլխի չորս ենթագլուխներում հեղինակը փաստական առատ նյութերի հիման վրա քննարկել է ընդհանրապես ընտանիքի, հայկական տոհմի, նահապետական ընտանիքի և հայ ժողովրդի ամուսնական մի քանի սովորությունների հարցերը։

Ուղեցույց ունենալով Ֆ. Էնգելսի և Լ. Մորգանի հայտնի աշխատությունները, Հ. Մեղավորյանն առաջին անգամ փորձել է հայ ազգագրության և իրավունքի հարցերը լուսաբանել մատերիալիստական, մարքսիստական հայեցակետով։ Իր գրեթե բոլոր հիմնական թեզերը, հայկական կոնկրետ նյութի հի-

---

3 Նույն տեղում, էջ 8։

4 Նույն տեղում, էջ 14—15։

ման վրա արած հետևությունները նա կառուցում է Էնգելսի դրույթների վրա, վկայակոչում նրան, առաջնորդվում նրա տեսակետներով։

Բնորոշ է, որ աշխատության առաջին գլխի հենց սկզբում Հ. Մեղավորյանը որպես ելակետ ընդունում է մարքսիստական տեսակետը և վկայակոչում է Ֆ. Էնգելսին։ «Մարդկությունը իր ամբողջ պատմական կյանքի ընթացքում,— գրում է Մեղավորյանը,— ենթակա է եղել երկու էական դրդիչների՝ արտադրության և վերարտադրության... Բնազդական տեսության համաձայն, բոլոր սոցիալական կազմակերպությունները և դրանց տարբեր ձևերը կախում ունեն այս երկու տեսակ արտադրության ձևից։ Ֆրիդրիխ Էնգելսն այդ մասին հետևյալն է ասել. «Սոցիալական ինստիտուտները, որտեղ ապրում են միևնույն ժամանակաշրջանի և երկրի տվյալ մարդիկ, նրանք սերտ կերպով կապված են այս երկու տեսակ արտադրության հետ. մի կողմից աշխատանքի զարգացման աստիճանով, մյուս կողմից ընտանիքի»[5]։

Ընտանիքի պատմական էվոլյուցիան, ասում է Հ. Մեղավորյանը, մինչև 1860 թվականը անծանոթ էր։ «Ընտանիքի պատմության հիմքը 1861 թ. դրեց Բախոֆենը՝ օգտագործելով դասական ամբողջ գրականությունը... Սակայն, նա սխալվում էր գերակշիռ դեր տալով կրոնական գաղափարներին,— գրում է Մեղավորյանը։— Կրոնը փոփոխվում է ժողովրդի զարգացման համեմատ։ Նա ժողովրդի արձագանքն է. սոցիալական միջավայրի արդյունք, հետևաբար նա չէր կարող սոցիալական երևույթների ու դրանց փոփոխությունների պատճառ հանդիսանալ»[6]։

Հենվելով Ֆ. Էնգելսի դրույթների վրա, Հ. Մեղավորյանը քննադատում է նաև իր ժամանակին անուն հանած Ֆյուստել դե Կուլանժի տեսակետը, հարցի մեկնաբանման ժամանակ դրսևորելով մարքսիստական մոտեցում։ Նա գրում է. «Ֆյուստել դե Կուլանժը նույն մոլորության մեջ է ընկնում, երբ ձգտում է մարդկային ընտանիքի կազմակերպումը բացատրել որպես նրա կրոնի արդյունք։ Ըստ մեզ, սոցիալական պայմաններն են ազդում կրոնի վրա, կրոնն է հարմարվում բարքերի փոփոխություններին։ Հռոմեացիների հավատը և ընտանեկան պաշտամունքը նրանց ընտանիքի սոցիալ-տնտեսական ռեժիմի կազմակերպման հետևանք էին։ Սակայն, մենք չենք ժխտում, որ կրոնը կարող է իր հերթին ներգործել ընտանիքի վրա»[7]։

Ընտանիքի և ամուսնության հարցերում Հ. Մեղավորյանը պաշտպանում է Էնգելսի և Մորգանի տեսակետը, առարկում Մակ-Լեննանին և ուրիշների։ «Օգնելով շատ ազգագրագետների, Ֆ. Էնգելսի... հետևություններից,— գրում է նա,— մենք մերժում ենք մաքուր ու պարզ բազմամայրության գաղափարը, որպես ընտանիքի կազմակերպման հատուկ ձև»[8]։ Լ. Մորգանին նա համարում է «Ընտանիքի գիտական և իրական պատմության գիտական հիմնադիր», որն իր գլուխգործոց «Հին հասարակություն» աշխատության մեջ ի մի բերեց երկար տարիների հետազոտությունների արդյունքները և վերջնականապես

---

5 Նույն տեղում, էջ 39—40։ Հմմտ. Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1940, էջ 6։

6 Նույն տեղում, էջ 41։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում, էջ 43։

հիմնեց իր տեսությունը[9]։ Այս տողերից հետո Հ. Մեղավորյանը գրում է. «Ֆրիդրիխ Էնգելսը, Մորգանի տեսությունների պաշտպանն ու կողմնակիցը, վերջերս կատարելագործեց և սիստեմատիկ կերպով զարգացրեց այդ տեսությունները»[10]։

Ամփոփելով ընտանիքի և ամուսնության վերաբերյալ իր շարադրանքը, Հ. Մեղավորյանը հանգում է այն հետևության, որ «Մարդկային էվոլյուցիայի երեք գլխավոր ստադիաներին համապատասխան եղել են ամուսնության երեք գլխավոր ձևեր՝ վայրենի վիճակում—խմբակային ամուսնություն, բարբարոսական վիճակում—զույգային (sundasmique) ամուսնություն և քաղաքակրթության վիճակում—միակին ամուսնություն»[11]։

Աշխատության առաջին գլխի երկրորդ և երրորդ ենթագլուխներում Հ. Մեղավորյանը խոսում է հայկական տոհմի և նահապետական ընտանիքի մասին։ Այդ հարցերն առաջին անգամ էին գիտական քննարկման ենթարկվում հայ գրականության մեջ։ «Լուիս Մորգանը և Ֆրիդրիխ Էնգելսը ուսումնասիրել են հին հույների և հռոմեացիների նահապետական «տոհմը»,— գրում է Հ. Մեղավորյանը։— Մաքսիմ Կովալևսկին անգնահատելի տեղեկություններ է հաղորդել նահապետական տնտեսությունների մասին... Մենք կաշխատենք նույն բանն անել հայերի նկատմամբ՝ փնտրելով նրանց մոտ նահապետական «տոհմի» մնացորդները»[12]։ Դա ազգագրական հարց է, ասում է Մեղավորյանը և ավելացնում է, թե ինքը հավակնություն չունի ամբողջ ծավալով լուսաբանել այդ, մանավանդ որ ազգագրական մշակված նյութեր չկան։ «Համեմատական պատմության ու ազգագրության տվյալների համաձայն, մենք համոզված ենք, որ մայրական «տոհմի» կարգը, ապա հայրական «տոհմինը» հաջորդաբար և դարեր շարունակ տիրող են եղել ինչպես հայերի, այնպես էլ ուրիշ ազգերի մոտ»[13]։ Հենվելով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և ուրիշ աղբյուրների վրա, Մեղավորյանը ուշագրավ հետևություններ է անում հայերի վերաբերյալ։ «Այն ժամանակներում, երբ հայերը մտել էին պատմության մեջ, նրանք գտնվում էին քաղաքակրթության շեմին։ Խմբակային ամուսնության մոդան բոլորովին անցել էր։ Մայրիշխանական ընտանիքը տեղի էր տվել հայրիշխանությանը»[14]։

Այնուհետև հեղինակը խոսում է տոհմի՝ «որպես հայերի սոցիալական կազմակերպության» կառուցվածքի, նրա անդամների փոխհարաբերությունների, տոհմի մեջ ամուսնության արգելքի, ընդհանուր հավատալիքների, թաղման ընդհանուր վայրի, համայնական հողատիրության մասին և այլն։ «Այն գյուղերը, որ երբեմն համայնական էին, մեր ենթադրությամբ «նահապետական տոհմի» մնացորդներ են, մինչև այսօր համայնական սահմանադրություն ունեն... Մշակելի հողը և արոտատեղերն ընդհանուրին են պատկանում։ Հայաստանում մինչև վերջին ժամանակները, հատկապես Երևանի

---

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում, էջ 44։

11 Նույն տեղում, էջ 50, տե՛ս նաև Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, էջ 91։

12 Նույն տեղում, էջ 51։

13 Նույն տեղում, էջ 51—52։

14 Նույն տեղում, էջ 52։

նահանգում, շատ գյուղեր կային, որտեղ մշակվելիք արտերը համայնական սեփականություն էին, յոթ տարին մեկ հողամասերը բաժանվում էին ընտանիքներին՝ ըստ նրանց անդամների քանակի։ Ղարաբաղում դեռ կան փռեր, որ պատկանում են ամբողջ գյուղին, ուր հաց են թխում... Համայնական օջախը նվիրական է ամբողջ համայնքի համար։ Այստեղ տեսնում ենք նաև նվիրական կրակի տևական պաշտամունքը, որ ընդհանուր էր հնդեվրոպական ցեղի բոլոր ազգերի համար»[15]։

Խոսելով հայկական նահապետական ընտանիքի մասին, Հ. Մեղավորյանն ասում է, որ դա գյուղացիների մոտ դեռ գոյություն ունի և «ուրիշ բան չէ, եթե ոչ կրճատված նահապետական տոհմ»։ Ընտանիքի նահապետական ձևը, ասում է նա, ընդհանուր է ինչպես հողագործ, այնպես էլ անասնապահ հայ գյուղացիների մոտ։ Գյուղական ընտանիքները կազմված են 20—40 հոգուց, ծագումով հոր շառավիղներից։ Ընտանիքի հայրը, որպես տան մեծ, տնօրինում է ամբողջ ունեցվածքը։ Նա է ընդունում եկամուտները և կատարում ծախսերը։ Բոլորը պետք է կատարեն նրա հրամանները[16]։ Նկարագրելով նահապետական ընտանիքը, Մեղավորյանը գրում է. «Ընտանեկան հասարակության ներսում ամեն ոք աշխատում է ըստ իր ուժերի և կարողությունների։ Նրանք ապրում են միևնույն հարկի տակ, միևնույն օջախի շուրջը, որ բոլորի համար նվիրական է։ Ճաշում են նույն սեղանից, անձնական եսամոլությունն իր տեղը զիջել է ընտանեկան շահին, որտեղ ամեն մեկը տեսնում է իր մասնավոր շահը... Հայ նահապետական ընտանիքի այդքան երկար գոյության գլխավոր պատճառը տնտեսական պայմանն է»[17]։

Հ. Մեղավորյանի մենագրության երկրորդ գլուխը՝ «Ամուսնությունը հայ կանոնիկ իրավունքում» (էջ 80—126), հետաքրքիր և արժեքավոր ուսումնասիրություն է ամուսնության և հայ կանոնիկ իրավունքի վերաբերյալ։ Այստեղ շատ սեղմ, բայց բովանդակալից նկարագրված են ամուսնական դաշինքը, որպես սրբազան մի ակտ, ազգակցական կապերը, ամուսնությունն արգելակող լծակները (կրոնական, արենակցական, հիվանդություն, ցավագարություն և այլն), ամուսնալուծության պայմանները (անհավատարմություն, ամլություն, անկարողություն, կնոջ կուսապղծություն, վարակիչ հիվանդություն, անհաղթելի խորշանք, գերություն և այլն), ամուսնալուծման հետևանքները, ունեցվածքի բաժանման, երեխաների խնամքի, կրկնամուսնության հարցերը և այլն։ Նկատելի է, որ այս և մյուս բոլոր հարցերում Հ. Մեղավորյանը հետևել է իր ժամանակի առաջավոր գիտության խոսքին, քննադատել և մերժել է հինն ու հնացածը, հավատարիմ մնացել գիտական, պատմական սկզբունքներին։ Հ. Մեղավորյանը իր մենագրությունը շարադրել է շատ հարցերում հետևելով Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» նշանավոր աշխատության սկզբունքներին։

Մենք լիովին համամիտ ենք Ա. Ադոյանի «Մարքսիզմի հայ առաջնեկներից մեկը» հոդվածում Հ. Մեղավորյանին և նրա գրքին տրված գնահատականին։ «Հակոբ Մեղավորյանի նշված աշխատությունը,— կարդում ենք այդ հոդվածում,— մեր ժողովրդի կյանքի մի բնագավառի՝ ամուսնա-ընտանեկան

15 Նույն տեղում, էջ 55։
16 Նույն տեղում, էջ 61։
17 Նույն տեղում, էջ 63։

հարաբերությունների և իրավունքի հարակից հարցերի մարքսիստական-մատերիալիստական մեկնաբանության առաջին լուրջ փորձերից մեկն է, որը (հայկական մտքի ասպարեզում) մարքսիստական մտքի զարգացման պատմության մեջ իր արժանի տեղը պետք է գրավի»[18]։ Ա. Ադոյանի այս տեսակետը պաշտպանում են նաև Խ. Բարսեղյանը[19] և Վ. Ավետիսյանը[20]։

Նոր էր լույս տեսել Հ. Մեղավորյանի աշխատությունը, երբ «Մշակ» թերթում 1895 թ. հունվարի 21-ին տպագրվեց Ստ. Մ.-ի (Ստեփան Մալխասյանի) գրախոսությունը։ Դրվատելով գրքի արժանիքները և նշելով թերությունները, վերջում Ստ. Մալխասյանը գրում է. «Գիրքն ունի գերազանց առավելություն. հիմնված է ճիշտ գիտական ոճի վրա և մի ամբողջական պատկեր է ներկայացնում հայոց ընտանիքի կազմակերպության և ամուսնական օրենքների։ Այս գրվածքը իր տեսակում առաջինն է, մասնագետ ուսումնասիրողի ձեռքում կարևոր ուղեցույց կլինի նորանոր հետազոտությունների ժամանակ։ Արժե թարգմանել հայերեն»[21]։

Հ. Մեղավորյանի հասարակական-քաղաքական հայացքների և մասնավորապես ազգագրության վերաբերյալ ունեցած մոտեցման լուսաբանման համար կարևոր է նրա քննադատական խոսքը նշանավոր ազգագրագետ, բանահավաք Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսի» մասին։ 1896 թ. Շուշիում լույս է տեսնում «Ազգագրական հանդեսի» առաջին գիրքը։ «Մուրճի» 1896 թ. մարտ-ապրիլի համարում Հ. Մեղավորյանը տպագրում է ընդարձակ գրախոսություն, որտեղ տեսական և գործնական մի շարք արժեքավոր դիտողություններ է անում հայ ժողովրդական բանահյուսության գանձերը հավաքելու, մշակելու, խմբագրելու և հրատարակելու վերաբերյալ։ Նյութեր հավաքելը բավական չէ, ասում է Մեղավորյանը, պետք է գիտական ուղղություն տալ հայ ազգագրությանը, մոտիկից ճանաչել ժողովրդի կյանքը։ «Հայ ազգագրության ամենագլխավոր և գրեթե միակ աղբյուրը հայ ժողովրդի կենցաղավարությունը և ավանդություններն են։ Ի՞նչ տեսակ ազգագրական տեսություն կարելի է անել, առանց ուշադրություն դարձնելու սրանց վրա... Առանց մեր ժողովրդի կյանքը մոտիկից ճանաչող և հետազոտող գրողների օժանդակության «Ազգագրական հանդեսի» հում նյութերը միշտ միակողմանի կլինի»[22]։

Հ. Մեղավորյանը խորհուրդ է տալիս «Ազգագրական հանդեսի» շուրջը համախմբել Աղայանի, Պռոշյանի, Քաջբերունու, Ս. Հայկունու, Ճանիկյանի և «սրանց նման ժողովրդի կյանքին ծանոթ գրողների»։ «Անցավ այն ժամանակը, որ գրողները անուշադիր թողնելով ժողովրդի իրական կյանքի հետազոտությունը... դիտնականի անուն էին վաստակում։ Անցած է զուր ջուր ծեծելու դարը։ Այժմ փորձառական մեթոդի դարն է։ Ամեն բան ֆակտերի հիման վրա հաստատված պիտի լինի»[23]։

---

18 «Վենինյան ուղիով», 1965, № 8, էջ 108։

19 Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, Երևան, 1967, էջ 213—214։

20 Վ. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 185—186։

21 «Մշակ», 1895, № 10, էջ 2։

22 «Մուրճ», 1896, № 3—4, էջ 466—467։

23 Նույն տեղում, էջ 467։

Հ. Մեղավորյանի պահանջը ժողովրդի կենսական շահերից բխող, առաջավոր մտածողի պահանջ էր։

ПЕРВАЯ ПОПЫТКА МАРКСИСТСКОГО ИССЛЕДОВАНИЯ АРМЯНСКОЙ ЭТНОГРАФИИ И ПРАВА

АРМЕН ПАРСАМЯН

Резюме

В 1894 г. в Лозанне вышла в свет монография А. Мегаворяна «Этнографическое и юридическое исследование армянской семьи и брака». Данная работа А. Мегаворяна явилась первой попыткой марксистского освещения истории армянской этнографии и права. Исследование указанной проблемы в работе проведено под влиянием классического труда Ф. Энгельса «Происхождение семьи, частной собственности и государства».